# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանի:

Ողջունելով Սերբիայի Հանրապետության նախագահի այցը հայոց հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ ստեղծված եղբայրական ջերմ կապերին եւ հույս հայտնեց, որ այս այցից հետո դրանք առավել կզորանան ու կամրապնդվեն՝ ի շահ հայ եւ սերբ ժողովուրդների բարօրության: Նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին եղբայրական ջերմ հարաբերություններ եւ կապեր ունի Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու հետ՝ Նորին Սրբությունն ընդգծեց երկու եկեղեցիների համագործակցությունը միջեկեղեցական հարաբերություններում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Սերբիայի Հանրապետության նախագահ Բորիս Տադիչն իր հիացմունքն արտահայտեց հայ մշակույթի եւ քրիստոնեական արժեքների հանդեպ: Խոսելով իր երկրի կյանքում Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու կարեւոր դերակատարության մասին՝ Բորիս Տադիչը հույս հայտնեց, որ երկու երկրների հարաբերությունների սերտացմանը զուգընթաց կզորանան ու առավել կամրապնդվեն նաեւ երկու եկեղեցիների հարաբերությունները:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր բարեմաղթանքները հայտնեց Սերբիայի նախագահին՝ Տիրոջ օգնականությունը հայցելով երկու բարեկամ քրիստոնյա ժողովուրդների համար: Հայոց Հայրապետն իր եղբայրական սիրո ողջույնը փոխանցեց նաեւ Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Պավել Պատրիարքին եւ Ս. Սինոդի բոլոր անդամներին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը, երկու երկրների դեսպանները, պաշտոնատար այլ անձինք: